ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվարի, 2017 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Հարյուրավոր տարիներ առաջ, այսպիսի մի պայծառ օր, սակայն մարդկային կյանքի խավար միջավայրում, Հրեաստանի ամենաանտեսված անկյունում՝ Բեթղեհեմ քաղաքում, ցուրտ, խավար եւ անտեսանելի մի վայրում, Աստված Իրեն հայտնեց. Աստված, որ արարչագործության պատմության մեջ Իր խոսքին չհնազանդվելու համար, Իր կենդանության, ներկայության ու տեսության վիճակից աստվածատիպ մարդուն արտաքսեց դրախտից եւ կենաց ծառի պտղի ճաշակումից զրկեց նրան, Աստված, որ Հին Կտակարանի էջերում արդարների, նահապետների ու մարգարեների շուրթերով, բազում օրինակներով խոսեց մարդուն՝ մեղքի, նյութապաշտ, ֆիզիկական կյանքի մեջ ճահճացող կյանքից հետ կանչելու դեպի հավիտենություն: Խոսեց, պատգամեց եւ բազում նշաններ ցույց տվեց, մինչեւ իսկ՝ Եսայի մարգարեի շուրթերով ասաց. «...մի նշան պիտի տրվի այս ժողովրդին, եւ կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, որի անունը Էմմանուէլ պիտի դրվի, որ նշանակում է Աստված մեզ հետ» (Հմմտ. Ես. Է. 15, Մատթ. Ա. 23):

Թագավորներ, իշխաններ, հասարակ ռամիկ գյուղացիներ, աղքատներ, մխիթարության կարոտյալներ, այս խոսքի եւ մարգարեության համաձայն, սպասում էին Տիրոջ հայտնությանը: Եւ, ահավասիկ, մարդկանց խավար գործերի, մեղքի մեջ ճահճացած, երկար մնացած, միայն ֆիզիկական կյանքի վրա հույս դրած մարդուն Աստված այնքան է սիրում, որ այդ մարդուն, հղփացած իշխանավորի կերպարի մեջ կամ մխիթարության

Քրիստոս ծնեալ այսօր ի Բեթղեհէմ ի յայրին,
եւ դասք վերի զուարթնոցն սոսկացեալ զարմացեալ կային.
զի տեսին մարմնով ծնեալ զԲանն Աստուած
(Շարական)

Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ.
հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի
(Շարական)

կարոտ աղքատի կերպարի մեջ, իջնում է երկնքից, Իր սիրո Հոգին է բերում երկրի վրա եւ, իբրեւ Լույս աշխարհի, հայտնվում է խավարի մեջ իր գործերը ծածկող մարդկային կյանքում, հայտնվում է՝ իբրեւ հեղաշրջիչ, իբրեւ կյանքի նորոգիչ, մարդկային կյանքի կատարելագործիչ:

Ինչո՞ւ ենք մենք տասնամյակներ անց, դարձյալ եկեղեցական տոնակարգի համաձայն, Ճրագալույցի այս երեկո եկել Աստծուն ընդառաջ, որպեսզի մեր ընտանիքներ տանենք Եկեղեցու խորաններից վառված այն ջերմ ճրագը, որ, իբրեւ Տիրոջ Լույսի խորհրդանիշ, պիտի գա մեր կյանքը, մեր հոգին տաքացնելու եւ ջերմացնելու, պիտի գա հաշտեցնելու մեր անձերի հետ, պիտի գա հաճություն հաստատելու մեր համամարդկային միջավայրի մեջ, պիտի գա իր փառքի հաստատությամբ, որպեսզի հոգեւոր խաղաղություն հաստատի մարդկանց կյանքում:

Ս. Ծննդյան դրվագում ավետարանիչները մեզ փոխանցում են, թե ինչպես, իջեւանատեղի չգտնելով, Հիսուսի ծնողները՝ Մարիամը եւ Հովսեփը, քարայրի մեջ պատսպարվեցին, ու այդ շրջանում երկնքից ճառագայթող մի աստղ, որ ամենափայլունն ու ամենազորեղն էր, իբրեւ Աստծո հայտնության նշան, ցույց տվեց նյութապես հարստացած, իշխանության մեջ ամրացած, սակայն գիտության փնտրտուքի մեջ գտնվող երեք մոգերին, ովքեր քայլեցին, անցան իրենց կյանքի ճամփան եւ եկան ընդառաջ այդ Լույսին, գտան Հիսուսին եւ իրենց կյանքից մասնիկ ընծայաբերեցին երկնքի ու երկրի Արարիչ Աստծուն, Ով եկել էր մարդկային մեղքը վերացնելու, մարդուն մխիթարություն բերելու, աղքատների ու կարոտյալների համար արդարություն հաստատելու, Ով եկել էր Աստծուց հեռացած մեղավոր հոգիներին, նյութի մեջ ճահճացած իշխանավորներին ողորմությամբ ու գթությամբ դատելու, Ով եկել էր, իբրեւ սիրո հայտնություն, սիրո խորհրդին կանչելու եւ ասելու. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու ծանրաբեռնվածներդ, եւ ես ձեզ հանգիստ պիտի պարգեւեմ» (Հմմտ. Մատթ. ԺԱ. 28):

Այսօր, երբ մենք գտնվում ենք Ս. Ծննդյան մեծագույն համաքրիստոնեական տոնակատարության նախատոնակի այս նախաճաշակ խորհրդի մեջ, առաջին հերթին մեր աղոթքների մեջ պիտի խորհրդածենք Տիրոջ Ս. Ծննդյան սիրո խորհրդի մասին, պիտի մտածենք, թե արդյոք Նաբուգոդոնոսոր արքան, որ ոսկեձույլ պաշտամունքի առարկա չինեց եւ կռապաշտության հրավիրեց բոլոր ազգերին, իշխանավորներին եւ հասարակ մարդկանց, մենք, իբրեւ Աստծո հոգեւոր զավակներ, ինչպես ենք արժեւորում Ս. Ծննդյան խորհուրդը մեր կյանքում: Եթե մենք գիտենք, որ Աստված այնքան սիրեց մարդուն, այնքան սիրեց Իր արարչագործությունը,

մինչեւ իսկ Իր Միածին Որդու մեջ այդ սերը հայտնեց՝ իբրեւ մարդկության փրկություն, իբրեւ կանչ՝ հավիտենական կյանքի բնակության համար:

Ուրեմն՝ մենք, սիրելինե՛ր, այդ սիրո ճանաչողության ճանապարհը պիտի փնտրենք, որովհետեւ եթե մեր գործերը խավարեն, ու մենք չենք ուզում, որ այդ գործերը հայտնի լինեն, մենք ճշմարիտ քրիստոնյա չենք, իսկ եթե ճանաչում ենք Աստծո լույսը, եւ եթե այդ լույսը մեր կյանքում այդպիսի ճանաչողությամբ փառավորվում է, ուրեմն՝ սիրո գործերով Աստված հանապազ ծնվում է մեր կյանքի, մեր հոգու, մեր սրտի մսուրի մեջ:

Մենք այս օրերին հիսնակի պատրաստության շրջան անցանք՝ քայլելով դեպի Աստվածահայտնության հրաշալի այս խորհուրդը: Այսօր աղոթքով խմբվել ենք համայն հայության այս հոգեւոր ծննդավայրում, որպեսզի այստեղից ճաշակենք հավիտենական կյանքի այն հացը, որ մեզ Աստծո հետ միավորելու, հաշտեցնելու, մեղքից ազատագրելու եւ մաքրելու է մեր կյանքը՝ հաստատելով այն սիրո գործերի մեջ:

Եթե մենք, սիրելի՛ հավատացյալներ, Քրիստոսի մեջ ենք, Քրիստոսի հետ ենք, եթե Քրիստոս մեր կյանքում ծնվել եւ փառավորվում է մեր գործերի մեջ, ուրեմն՝ մենք նոր արարածներ ենք, որովհետեւ հինն անցավ եւ տիեզերքում ամեն ինչ նոր եղավ: Ուրեմն՝ մեր կյանքի նորանալու այս խորհուրդի հանգրվանին եկե՛ք միասին Աստծուն աղաչենք եւ խնդրենք, որ Իր իմաստության լույսը ծագեցնի նաեւ այս երեկո մեր մտքի, մեր հոգու եւ կյանքի մեջ, որպեսզի մեր սիրտը դառնա այն իրական մսուրը, որտեղ անտեսված, մեղքի, խավարի ու սայթաքումի մեջ լույս ծագի, սերը հայտնվի, եւ այդ սերը՝ մեր կյանքի, հավատքի գործերի մեջ փառավորվի: Եկե՛ք այս հոգեւոր սիրով սիրենք միմյանց, որը երբեք «չի գոռոզանում, ամբարտավան վարմունք չի ունենում, այլ քաղցրաբարո է, միշտ հանդուրժող է, միշտ ներող է» (հմմտ. Ա. Կորնթ. ԺԳ. 4-5): Այս սիրո կյանքով է, որ մեր ընտանիքներում, Հայոց մեր երկրում, հայրենյաց մեր սահմաններում, այսօրվա խորհուրդով, ամենքիս հավատքով ու աղոթքով իրական աստվածային ու հոգեւոր խաղաղությունը պիտի հաստատվի: Թող Տիրոջ նշանը սիրո այս հոգենորոգ խորհրդի մեջ մեզ զորացնի, ամրապնդի հաշտության մեջ՝ հովիվների օրինակելի խոնարհ կերպարի մեջ հաստատելով. եւ թող զորությունների ու սիրո Իշխանը ծնվի մեր կյանքում ու առաջնորդի մեր ընթացքը՝ դեպի միություն ճշմարիտ եւ միակ Աստծո հետ:

Եկե՛ք այդ սիրո միությամբ ու հաշտությամբ, սիրո հանդուրժողությամբ միմյանց ողջունենք Քրիստոսի Ս. Ծննդյան բարի ավետիսով եւ ասենք. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիս: Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի». ամեն: